

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

#### **Հոդված 1. Ֆինանսական համահարթեցման մասին օրենսդրությունը**

Ֆինանսական համահարթեցումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավական ակտերով:

#### **Հոդված 2. Օրենքի խնդիրները**

Սույն օրենքը սահմանում է ֆինանսական համահարթեցման հասկացությունը, սկզբունքները, համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դրույթական հաշվարկման և հատկացման կարգերը:

#### **Հոդված 3. Ֆինանսական համահարթեցման հասկացությունը**

Ֆինանսական համահարթեցումը համայնքների ներդաշնակ զարգացմանը նպաստելու, ինչպես նաև ֆինանսապես բույլ համայնքներին օժանդակելու համար նրանց նվազագույն ծախսերը ապահովելու նպատակով՝ տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված պարտադիր լիազորությունների իրականացման ժամանակ համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարրերությունների նվազեցումն է:

#### **Հոդված 4. Ֆինանսական համահարթեցման սկզբունքները**

Ֆինանսական համահարթեցման սկզբունքներն են՝

1. Համայնքների սեփական եկամուտների և ծախսային կարիքների հարաբերակցությունների անհամաշափության մեղմացում.
2. Պետական բյուջեից համայնքներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դրույթական նպատակայնություն.
3. Համայնքների լիազորությունների իրականացման և ֆինանսական միջոցների օգտագործման ազատության և ինքնուրույնության պահպանում.
4. Պետական բյուջեից համայնքներին հատկացվող համահարթեցման դրույթական ընդհանուր գումարի նվազագույն չափի օրենքով սահմանում.
5. Ըստ առանձին համայնքների՝ սույն օրենքով սահմանված կարգով հատկացվող դրույթական Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքով հաստատում.

#### **Հոդված 5. Համահարթեցման դրույթական ընդհանուր գումարի ձևավորման աղբյուրը**

1. Համահարթեցման դրույթական ֆինանսական միջոցները ձևավորվում են պետական բյուջեի միջոցներից և հանդիսանում են համայնքների բյուջեներին հատկացվող ոչ նպատակային պետական տրամադրություն:

2. Համահարթեցման դրույթական ստացող համայնքները պահպանում են սեփական պատասխանատվությամբ գործելու իրավունքը և այդ ֆինանսական միջոցների օգտագործման ազատությունը:

#### **Հոդված 6. Համահարթեցման դրույթական ստացող համայնքները**

Սույն օրենքով սահմանված ֆինանսական միջոցների բաշխման կարգի հիման վրա համահարթեցման դրույթական չեն կարող ստանալ այն համայնքները, որոնց բյուջետային

ապահովածությունը չի բավարարում համահարթեցման դրտացիա ստանալու համար սույն օրենքի 8 –րդ և/կամ 10 –րդ հոդվածներով նախատեսված պահանջներին:

#### Հոդված 7. Համահարթեցման դրտացիաների հաշվարկման գործոնները

1.Համահարթեցման դրտացիաները հաշվարկվում են ըստ առանձին համայնքների բյուջեների:Համահարթեցման դրտացիաները հատկացվում են երկու գործոններով՝

- 1) Բնակչությամբ փոքր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նվազագույն ծախսերի ապահովում (այսուհետ “ա” գործոն):
- 2) Համայնքների բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային միջոցների անհավասարաչափության մեղմացում (այսուհետ “բ” գործոն):

“ա” գործոն - դրտացիաների բաշխում՝ ըստ համայնքի մասշտաբի

գործակցի -  $\Omega^U$ ,

“բ” գործոն - դրտացիաների բաշխում՝ ըստ համայնքի բյուջետային

ապահովածության գործակցի -  $\Omega^B$ :

2. Համահարթեցման դրտացիաների ընդհանուր գումարի 10 տոկոսը բաշխվում է “ա” գործոնով, իսկ 90 տոկոսը՝ “բ” գործոնով:

#### Հոդված 8. Համահարթեցման դրտացիաների “ա” գործոնով հաշվարկման կարգը

1. Սույն օրենքի “ա” գործոնով համահարթեցման դրտացիաների բաշխումն իրականացվում է ըստ մասշտարի գործակցի այն համայնքների միջև, որոնց մասշտարի գործակիցը բարձր է բոլոր համայնքների մասշտարի գործակցի միջին ցուցանիշից: Համայնքը “ա” գործոնով համահարթեցման դրտացիա է ստանում, եթե նրա մասշտարի գործակիցը բավարարում է հետևյալ պահանջին՝

$$(\Omega^U_i - \Omega^U_{\text{միջին}}) > 0, \text{ որտեղ՝}$$

$\Omega^U_i$  - 9 –րդ հոդվածով սահմանված i-րդ համայնքի մասշտարի գործակիցն է,

$\Omega^U_{\text{միջին}}$  - բոլոր համայնքների մասշտարի գործակցի միջին կշռված ցուցանիշն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\Omega^U_{\text{միջին}} = \frac{\Omega^U_1 + \Omega^U_2 + \dots + \Omega^U_n}{n}, \text{ որտեղ՝}$$

$\Omega^U_i$  - i-րդ համայնքի բնակչության թիվի հանրագումարն է ( $n$ ՝

$\Omega^U_{\text{միջին}} = \frac{\Omega^U_1 + \Omega^U_2 + \dots + \Omega^U_n}{n}, \text{ որտեղ՝}$

բնակչության թիվ),

2.Համայնքի բնակչության թիվը տվյալ համայնքի տարածքում հաշվառված բնակչության թիվն է՝ հաշվարկվող տարվան նախորդող տարվա տարեսկզբի դրությամբ:

3.Ըստ համայնքի մասշտարի գործակցի՝ համահարթեցման դրտացիայի ընդհանուր գումարի հաշվարկման բանաձևն է.

$$\Omega^U = 0.1 \times \Omega, \text{ որտեղ՝}$$

$\Omega$  - ըստ մասշտարի գործակցի բաշխվող՝ դրտացիայի

գումարն է,

**Դ** - համահարթեցման համար նախատեսված դրտացիայի ընդհանուր գումարն է:

4. Ըստ մասշտարի գործակցի բաշխվող դրտացիայի գումարը հավասարապես բաշխվում է, այդ դրտացիան ստացող բոլոր համայնքների միջև և հավասար է՝

$$\Omega_i^{\text{մաս}} = \Omega^{\text{Մ}} / \zeta_{\Omega}^{\text{մաս}}$$

**Դ<sub>i</sub><sup>մաս</sup>** - ըստ մասշտարի գործակցի բաշխվող մեկ

համայնքի դրտացիայի չափն է,

**Հ<sub>Ω</sub><sup>մաս</sup>** - ըստ մասշտարի գործակցի դրտացիա ստացող

համայնքների թիվն է:

5. Մասշտարի գործակցով “ա” գործոնով համայնքի դրտացիա ստանար չի բացառում, նոյն համայնքին՝ ստանալ դրտացիա “բ” գործոնով՝ ըստ բյուջետային ապահովածության գործակցի: Ըստ մասշտարի գործակցի “ա” գործոնով հատկացվող ֆինանսական միջոցները հաշվի են առնվում նոյն համայնքների նոր բյուջետային ունակության գործակցի հաշվարկման համար:

## Հոդված 9. Մասշտարի գործակցի հաշվարկման կարգը

1. Մասշտարի գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման մեկ շնչին ընկնող ծախսների վրա համայնքի բնակչության թվաքանակի ազդեցությունն է:

2. Մասշտարի գործակիցը հաշվարկվում է՝

$$UQ^i = ((1 - \alpha) \times R_i + \alpha \times R_{\text{միջ}}) / R_i, \text{որտեղ՝}$$

**UQ<sup>i</sup>** - i-րդ համայնքի մասշտարի գործակիցն է,

**R<sub>i</sub>** - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

**R<sub>միջ</sub>** - ՀՀ մեկ համայնքին ընկնող բնակչության միջին թիվն է,

**α** - համայնքային ծախսների ֆիքսված բաղադրիչն արտացոլող

հաստատումն է,

$$R_{\text{միջ}} = R_{\text{ՀՀ}} / \zeta_{\text{ՀՀ}}, \text{որտեղ՝}$$

**R<sub>ՀՀ</sub>** - համայնքների բնակչության թվի հանրագումարն է

(ՀՀ բնակչության թիվ),

**ζ<sub>ՀՀ</sub>** - ՀՀ համայնքների ընդհանուր թիվը

3. Համայնքային ծախսների ֆիքսված բաղադրիչը հաշվարկվում է յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ ՀՀ բոլոր համայնքների վերջին երեք տարվա փաստացի տվյալների հիման վրա՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով:

## Հոդված 10. Համահարթեցման դրտացիաների “բ” գործոնով հաշվարկման կարգը

1. Համահարթեցման դրտացիաներ՝ ըստ համայնքների բյուջետային ապահովածության գործակցի, “բ” գործոնով ստանում են բոլոր այն համայնքներ, որոնց բյուջետային ապահովածության գործակցը՝ ներառյա «ա» գործոնով հատկացված դրտացիան, փոքր է բյուջետային ապահովածության սույն օրենքով սահմանված մակարդակի ցուցանիշից:

2. Ըստ համայնքի բյուջետային ապահովածության գործակցի՝ համահարթեցման դրույթի ընդհանուր գումարը (”բ” գործոն) հաշվարկվում է՝

$$\Omega^{\text{ԲԱ}} = \Omega - \Omega^{\text{Մ}}, \text{ որտեղ՝}$$

**Ω<sup>ԲԱ</sup>** – ”բ” գործոնվ, ըստ բյուջետային ապահովածության գործակցի

բաշխվող դրույթի գումարն է,

**Ω** – համահարթեցման համար նախատեսված դրույթիայի

ընդհանուր գումարն է,

**Ω<sup>Մ</sup>** – ”ա” գործոնվ, ըստ մասշտարի գործակցի բաշխվող

դրույթի գումարն է:

3. Ըստ բյուջետային ապահովածության գործակցի՝ ”բ” գործոն, դրույթիայի բաշխումն իրականացվում է համայնքի եկամտային ունակության և ծախսային կարիքների գործակցների հարաբերության ցուցանիշին համապատասխան։ Այդ ցուցանիշը հաշվարկվում է՝ հաշվի առնելով համայնքներին՝ ըստ մասշտարի գործակցի ”ա” գործոնվ հատկացման դրույթիայի գումարը՝ որպես համայնքի բյուջեի եկամուտ։ Համայնքի նոր եկամտային ունակության գործակցը, հաշվարկվում է՝

$$\Omega_{\text{ՈՒԳ}_i}^{\text{Ա}} = [(\Omega_{\text{ՈՒ}} + \Omega_i^{\text{մաս2}}) / \beta_i] / [(\Omega_{\text{ՈՒ}} + \Omega^{\text{Մ}}) / \beta_{\text{ՀՀ}}], \text{ որտեղ՝}$$

**ԵՈՒԳ<sub>i</sub><sup>Ա</sup>** - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակցն է՝ ”ա” գործոնվ դրույթիայի բաշխումից հետո,

**ԵՈՒ<sub>i</sub>** - i-րդ համայնքի եկամտային ունակությանն է մինչև ”ա” գործոնվ դրույթիայի բաշխումը,

**Բ<sub>i</sub>** - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

**ԵՈՒ** - բոլոր համայնքների եկամտային ունակության հանրագումարն է մինչև ”ա” գործոնվ դրույթիայի բաշխումը,

**Ω<sub>i</sub><sup>մաս2</sup>** - ըստ մասշտարի գործակցի բաշխվող՝ մեկ համայնքի դրույթիայի չափն է,

**Ω<sup>Մ</sup>** - ”ա” գործոնվ ըստ մասշտարի գործակցի բաշխվող դրույթիայի ընդհանուր գումարն է,

**ԲՀՀ** -ՀՀ բնակչության թիվը:

4. ”ա” գործոնվ դրույթիայի բաշխման արդյունքում համայնքի բյուջետային ապահովածության գործակցի հաշվարկման քանածնն է՝

$$\Omega_{\text{ԱԱԳ}_i}^{\text{Ա}} = \Omega_{\text{ՈՒԳ}_i} / \Omega_{\text{ԾԿԳ}_i}, \text{ որտեղ՝}$$

**ԱԱԳ<sub>i</sub><sup>Ա</sup>** - i-րդ համայնքի բյուջետային ապահովածության գործակցն է՝ ”ա” գործոնվ դրույթիայի բաշխումից հետո,

**ԵՈՒԳ<sub>i</sub><sup>Ա</sup>** - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակցն է՝ ”ա” գործոնվ դրույթիայի բաշխումից հետո,

**ԾԿԳ<sub>i</sub>** - i-րդ համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակցն է:

5. Ըստ բյուջետային ապահովածության գործակցի՝ ”բ” գործոնվ դրույթիաներ են ստանում այն համայնքները, որոնց բյուջետային ապահովածության գործակցը համահարթեցման սահմանային մակարդակի արժեքից ցածր է։ Սույն օրենքով սահմանվում է համահարթեցման սահմանային մակարդակի այնպիսի արժեքը, որի դեպքում՝ «ք» գործոնվ բաշխվող ֆինանսական միջոցների կարող են լրացնել դրույթիա ստացող համայնքների բյուջետային ապահովածության և համահարթեցման մակարդակի միջև եղած տարբերության 75 տոկոսին։

6. ”բ” գործոնվ յուրաքանչյուր համայնքին տրամադրվող համահարթեցման դրույթիան հավասար է յուրաքանչյուր համայնքի բյուջետային ապահովածության և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած տարբերության 75 տոկոսին։ Յուրաքանչյուր համայնքի բյուջետային ապահովածության և համահարթեցման սահմանային մակարդակի միջև եղած ամբողջ տարբերությունը հաշվարկվում է՝

$$\Omega_{\text{ԱԱԳ}_i}^{\text{ԱԱ}} = (\zeta_{\text{ԱԱ}} - \Omega_{\text{ԱԱԳ}_i}^{\text{Ա}}) \times \beta_i \times \Omega_{\text{ԾԿԳ}_i} \times \mathbf{B}_{\text{Միջ}}^{1/2}, \text{ որտեղ՝}$$

**ԳՈՒՄԱԿՄԱՆ**- i-րդ համայնքի համար անհրաժեշտ գումարի չափն է, որը կրավարարի ամբողջությամբ լրացնելու այդ համայնքի բյուջենային ապահովածության գործակցի և համահարթեցման սահմանային մակարդակի տարրերությունը,

**ՀՍՄ** - համահարթեցման սահմանային մակարդակն է,

**ԾԿԳ<sub>i</sub>** - i-րդ համայնքի ծախսային կարիքների կարգավորիչ գործակիցն է,

**Բ<sub>i</sub>** - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

**Ե<sub>ՄԻ</sub><sup>12</sup>** - մեկ շնչին ընկնող միջին համայնքային եկամուտներն է, ներառյալ «ա» գործոնով տրված դոտացիան:

$$Ե_{ՄԻ}^{12} = \frac{\sum ԵՈՒ_i + ԴՄ}{Բ_{ՀՅ}}, \text{ որտեղ՝}$$

**ԵՈՒ<sub>i</sub>** - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակիցն է ,

**ԴՄ** - ըստ մասշտաբի գործակցի բաշխվող դոտացիայի ընդհանուր գումարն է,

**ԲՀՅ** - բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարն է (ՀՀ բնակչության թիվ):

7. Համայնքներին «բ» գործոնով տրամադրվող դոտացիաները հաշվարկվում են՝

$$\Omega_i^ԲՄ = 0,75 \times ԳՈՒՄ_i, \text{ որտեղ՝}$$

**ԴԲՄ** - i-րդ համայնքին “բ” գործոնով տրվող դոտացիայի գումարն է,

**ԳՈՒՄ<sub>i</sub>**- i-րդ համայնքի համար անհրաժեշտ գումարի չափն է, որը կրավարարի ամբողջությամբ լրացնելու այդ համայնքի բյուջենային ապահովածության գործակցի և համահարթեցման սահմանային մակարդակի տարրերությունը:

## Հոդված 11. Համայնքի բյուջետային ապահովածության գործակցի հաշվարկման կարգը

1. Համայնքի եկամտային ունակության և ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցների հարաբերությունը, որի հիման վրա իրականացվում է «բ» գործոնով համահարթեցման դոտացիայի հաշվարկը, տվյալ համայնքի բյուջետային ապահովածության գործակիցն է:

2. Համայնքների բյուջետային ապահովածության գործակցը հաշվարկվում է՝

$$\mathbf{ԲԱԳ}_i = \mathbf{ԵՈՒԳ}_i / \mathbf{ԾԿԳ}_i, \text{ որտեղ՝}$$

**ԲԱԳ<sub>i</sub>** - i-րդ համայնքի բյուջետային ապահովածության գործակիցն է,

**ԵՈՒԳ<sub>i</sub>** - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակիցն է,

**ԾԿԳ<sub>i</sub>** - i-րդ համայնքի ծախսային կարիքների գործակիցն է:

## Հոդված 12. Համայնքի եկամտային ունակության գործակցի հաշվարկման կարգը

1. Համայնքի եկամտային ունակության գործակիցը՝ համայնքների բյուջեների եկամուտներին օրենքով ամրագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի՝ տվյալ համայնքում և հանրապետությունում մեկ շնչին ընկնող գումարների հարաբերությունն է:

2. Համայնքի եկամտային ունակությունը տվյալ համայնքի բյուջեին օրենքով ամրագրված հետևյալ եկամտատեսակների հանրագումարն է՝

1)Հոդի հարկի հաշվարկային գումարի ցուցանիշ.

2)Գույքահարկի հաշվարկային գումարի ցուցանիշ.

ա. Համայնքի հողի հարկի և գույքահարկի հաշվարկային գումարի ցուցանիշները յուրաքանչյուր համայնքի գծով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված՝ այդ համայնքի բյուջե հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարում վճարման ենթակա հողի հարկի և գույքահարկի տարեկան գումարներն են (առանց հողի հարկի և գույքահարկի գծով՝ հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա տարեսկզբի դրությամբ առկա շմարված ապարների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա լներացքում հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների), ավելացված Հայաստանի Հանրապետության օրենքներով և համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումներով ֆիզիկական անձանց և կազմակերպություններին հողի հարկի և գույքահարկի գծով արտոնությունների տրամադրման հետևանքով այդ հարկերի գծով համայնքների հաշվարկային տարվա բյուջեներում եկամուտների կորուստների գումարները:

3) Մասհանվող հարկերի հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա փաստացի ցուցանիշ

4) **Պետական տուրքերի հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա փաստացի ցուցանիշ:**

3. Համայնքի եկամտային ունակությունը հաշվարկվում է՝

$$\text{ԵՈՒ}_i = \zeta_i + \Phi_i + U_i + \Psi_i, \text{որտեղ՝}$$

$\zeta_i$  - i-րդ համայնքի հողի հարկի հաշվարկային գումարի ցուցանիշն է,

$\Phi_i$  - i-րդ համայնքի գույքի հարկի հաշվարկային գումարի ցուցանիշն է,

$U_i$  - i-րդ համայնքի մասհանվող հարկերն են,

$\Psi_i$  - i-րդ համայնքի պետական տուրքերն են:

4. Համայնքի եկամտային ունակության գործակիցը հաշվարկվում է՝

$$\text{ԵՈՒ}\Phi_i = (\text{ԵՈՒ}_i / \Phi_i) / (\text{ԵՈՒ} / \Phi_{\text{Հ}}), \text{որտեղ՝}$$

$\text{ԵՈՒ}\Phi_i$  - i-րդ համայնքի եկամտային ունակության գործակիցն է,

$\text{ԵՈՒ}_i$  - i-րդ համայնքի եկամտային ունակությանն է,

$\Phi_i$  - i-րդ համայնքի բնակչության թիվն է,

$\text{ԵՈՒ}$  - բոլոր համայնքների եկամտային ունակության հանրագումարն է,

$\Phi_{\text{Հ}}$  - բոլոր համայնքների բնակչության թվի հանրագումարն է (ՀՀ բնակչության թիվ):

### Հոդված 13.Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցը

1. Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցը տվյալ համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ծախսերի մեջ շնչին ընկնող տույն օրենքով սահմանված ծախսային գործուների գործակիցների հանրագումարն է:

2. Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցի վրա ազդում են բազմաթիվ գործուներ: Ծախսային կարիքի գործակիցն ուղակիրեն կապված է՝

1) կիրառվող ծախսային գործուների տեսակներից և դրանց գործակիցների արժեքից,

2) համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակցում յուրաքանչյուր ծախսային գործունի գործակցի (այսուհետ ծախսային գործակից) տեսակարար կշռից (բաժնենասից):

3. Հայաստանի Հանրապետության համայնքների և դրանց վերապահված պարտադիր լիազորությունների իրականացման առանձնահատկություններից ելնելով՝ սույն օրենքում կիրառվում են ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցի վրա առավել ազդեցություն ունեցող այնպիսի ծախսային գործակիցներ, որոնց վերաբերյալ տվյալները չափելի, մատչելի և հավաստի են:

4. Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցը հաշվարկվում է սույն օրենքով սահմանված հետևյալ ծախսային գործակիցներով և իրենց համապատասխան տեսակարար կշիռներով՝

- 1) Մասշտաբի գործակից՝  $\zeta^{\text{ՄՊ}}$  - 25 տոկոս.
- 2) Տրանսպորտային մատչելիության գործակից՝  $\zeta^{\text{ՏՄՊ}}$  - 15 տոկոս.
- 3)Համայնքի ծառայությունների որակի գործակից՝  $\zeta^{\text{ԾՊ}}$  - 10 տոկոս.
- 4)Համայնքի բարձրադիրության գործակից՝  $\zeta^{\text{ԲԴՊ}}$  - 15 տոկոս.
- 5)Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակից՝  $\zeta^{\text{ՔՊ}}$  - 25 տոկոս.
- 6)Բնակչության տարիքային կառուցվածքի գործակից՝  $\zeta^{\text{ԲՏԿ}}$  - 10 տոկոս.

5. Մասշտաբի ծախսային գործակիցի հաշվարկման կարգը ներկայացված է 10-րդ

**հոդվածում:**

#### **Հոդված 14. Տրանսպորտային մատչելիության ծախսային գործակիցի հաշվարկման կարգը**

1. Տրանսպորտային մատչելիության ծախսային գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ծախսերի վրա նախկին շրջկենտրոնից, մարզկենտրոնից և Երևանից համայնքի հեռավորության աղեցությունն է:

2. Տրանսպորտային մատչելիության գործակիցը հաշվարկվում է՝

$$SUQ^i = 1 + (0,1 \times \zeta_i^{\text{ՄՊ}} + 0,3 \times \zeta_i^{\text{ՏՄՊ}} + 0,6 \times \zeta_i^{\text{ԾՊ}}) / (0,1 \times \zeta_{\text{ԾՊ}}^{\text{ՄՊ}} + 0,3 \times \zeta_{\text{ԾՊ}}^{\text{ՏՄՊ}} + 0,6 \times \zeta_{\text{ԾՊ}}^{\text{ԾՊ}}), \quad \text{որտեղ՝}$$

$SUQ^i$  - i-րդ համայնքի տրանսպորտային մատչելիության գործակիցն է,

$\zeta_i^{\text{ՄՊ}}$  - i-րդ համայնքի հեռավորությունն է մայրաքաղաքից,

$\zeta_i^{\text{ՏՄՊ}}$  - i-րդ համայնքի հեռավորությունն է մարզկենտրոնից,

$\zeta_i^{\text{ԾՊ}}$  - i-րդ համայնքի հեռավորությունն է նախկին շրջկենտրոնից,

$\zeta_{\text{ԾՊ}}^{\text{ՄՊ}}$  - բոլոր համայնքների միջին հեռավորությունն է մայրաքաղաքից,

$$\zeta_{\text{ԾՊ}}^{\text{ՄՊ}} = \sum_i \zeta_i^{\text{ՄՊ}} / \zeta_{\text{ԾՊ}} \quad \text{որտեղ՝}$$

$\sum_i \zeta_i^{\text{ՄՊ}}$  - ՀՀ բոլոր համայնքների՝ մայրաքաղաքից ունեցած հեռավորությունների հանրագումարն է,

$\zeta_{\text{ԾՊ}}$  - ՀՀ համայնքների ընդհանուր քիվն է,

$\zeta_{\text{ԾՊ}}^{\text{ՄՊ}}$  - համայնքների միջին հեռավորությունն է մարզկենտրոնից,

$$\zeta_{\text{ԾՊ}}^{\text{ՄՊ}} = \sum_i \zeta_i^{\text{ՄՊ}} / \zeta_{\text{ԾՊ}} \quad \text{որտեղ՝}$$

$\sum_i \zeta_i^{Sw_{pq}}$  - ՀՀ բոլոր համայնքների՝ իրենց մարզի մարզկենտրոնից ունեցած

հեռավորությունների հանրագումարն է,

$\zeta_{\text{ՀՀ}}$  - ՀՀ համայնքների ընդհանուր թիվն է,

$\zeta_{\text{միջ}}^{Sw_{pq}}$  - համայնքների միջին հեռավորությունն է իրենց նախկին շրջկենտրոնից,

$$\zeta_{\text{միջ}}^{Sw_{pq}} = \sum_i \zeta_i^{Sw_{pq}} / \zeta_{\text{ՀՀ}} \text{ որտեղ՝}$$

$\sum_i \zeta_i^{Sw_{pq}}$  - ՀՀ բոլոր համայնքների՝ իրենց նախկին շրջկենտրոնից

հեռավորությունների հանրագումարն է,

$\zeta_{\text{ՀՀ}}$  - ՀՀ համայնքների ընդհանուր թիվն է:

Հոդված 15. Համայնքային ծառայությունների որակի ծախսային գործակցի հաշվարկման կարգը

1. Համայնքային ծառայության որակի ծախսային գործակցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացնան ծախսերի վրա համայնքային ծառայությունների որակի ազդեցությունն է: Համայնքային ծառայությունների որակի գործակցը պայմանավորված է տեղական ինքնակառավարման մարմնների կողմից մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ համայնքի կարգավիճակից բխող տարբերակված պահանջներով:

2. Համայնքի ծառայության որակի գործակցը հաշվարկվում է՝

$$\Omega Q^i = Q^{\text{օր}}_i, \text{որտեղ՝}$$

$\Omega Q^i$  - i-րդ համայնքի ծառայությունների որակի գործակցն է,

$Q^{\text{օր}}_i$  - i-րդ համայնքի ծառայությունների որակի գործակցի արժեքն է:

3. Համայնքները բաժանված են երեք խմբերի՝ իրենց համապատասխան ծառայությունների որակի գործակցների՝

1)  $Q^{\text{օր}} = 1.25$  գործակցով համայնքներ, որոնց ցանկը հաստատվում է

կառավարության որոշմամբ.

2)  $Q^{\text{օր}} = 1.1$  գործակցով թաղային և քաղաքային համայնքները՝ բացառությամբ առաջին խմբում ընդգրկվածների.

3)  $Q^{\text{օր}} = 1.0$  գործակցով բոլոր համայնքները՝ բացառությամբ առաջին և երկրորդ խմբում ընդգրկվածների:

Հոդված 16. Համայնքի բարձրադիրության ծախսային գործակցի հաշվարկման կարգը

1. Համայնքի բարձրադիրության ծախսային գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի բարձրադիրության ազդեցությունն է:

2. Համայնքի բարձրադիրության գործակիցը հաշվարկվում է՝

$$\mu q^i = q^{z^{\mu}_i}, \text{որտեղ՝}$$

$\mu q^i$  - i-րդ համայնքի բարձրադիրության գործակիցն է,

$q^{z^{\mu}_i}$  - i-րդ համայնքի բարձրադիրության գործակիցի արժեքն է:

3. Համայնքները բաժանված են երեք խմբերի՝ իրենց համապատասխան բարձրադիրության գործակիցների՝

1)  $\mu q = 1.0$  գործակցով համայնքները, որոնց բարձրությունը ծովի մակերևույթից

մինչև 1700մ է.

2)  $\mu q = 1.2$  գործակցով համայնքները, որոնց բարձրությունը ծովի մակերևույթից

1700-2000մ է.

3)  $\mu q = 1.4$  գործակցով համայնքները, որոնց բարձրությունը ծովի մակերևույթից

2000մ ավել է.

Հոդված 17. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործակցի հաշվարկման կարգը

1. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ծախսային գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի ազդեցությունն է:

2. Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակիցը հաշվարկվում է՝

$$\mu \varrho q^i = 1 + 0,2(\mu_{\text{ՆՄ}} - 1), \text{որտեղ՝}$$

$\mu \varrho q^i$  - i-րդ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի գործակիցն է,

$\mu_{\text{ՆՄ}}$  - i-րդ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի թիվն է:

Հոդված 18. Բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործակցի հաշվարկման կարգը

1. Բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործակիցը համայնքի պարտադիր լիազորությունների իրականացման ծախսերի վրա համայնքի բնակչության տարիքային կառուցվածքի ազդեցությունն է:

2. Բնակչության տարիքային կառուցվածքի գործակիցը հաշվարկվում է՝

$$\mu_{\text{ՏԿ}} q^i = (1 + (\mu_i^b + \mu_i^d) / \mu_i) / (1 + (\mu^b + \mu^d) / \mu_{\text{hh}}), \text{որտեղ՝}$$

$\mu_{\text{ՏԿ}} q^i$  - i-րդ համայնքի բնակչության տարիքային կառուցվածքի գործակիցն է,

- $\mu_i^b$  - i-րդ համայնքի 0-16 տարեկան բնակչության թիվն է,
- $\mu_i^o$  - i-րդ համայնքի կենսաքաղաքային տարիքի բնակչության թիվն է,
- $\mu_i$  - i-րդ համայնքի բնակչության թիվն է,
- $\mu^b$  - ՀՀ 0-16 տարեկան բնակչության թիվն է,
- $\mu^o$  - ՀՀ կենսաքաղաքային տարիքի բնակչության թիվն է,
- $\mu_{\text{ՀՀ}}$  - ՀՀ համայնքների բնակչության թվի հանրագումարն է (ՀՀ բնակչության թիվ):

#### **Հոդված 19. Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակցի հաշվարկման բանաձևը**

1. Համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակցը հավասար է մասշտարի, տրանսպորտային մատչելիության, համայնքի ծառայությունների որակի, համայնքի բարձրադիրության, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի, բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործակցների հանրագումարին՝ իրենց համապատասխան տեսակարար կշիռներով:

2. Համայնքի ծախսային կարիքի գործակցի հաշվարկման ամփոփ բանաձևն է՝

$$\sigma Q_{\text{հաշ.}}^i = \sum_i (C_n \times \sigma Q_n), \text{ որտեղ՝}$$

$\sigma Q_n^i$  - i-րդ համայնքի n - րդ ծախսային գործակցի տեսակարար կշիռն է,  
 $\sigma Q^i$  - i-րդ համայնքի n - րդ ծախսային գործակցն է,

$$\sigma Q_{\text{հաշ.}}^i = C^{\text{ՄՊ}} \times UQ^i + C^{\text{ՏՄՊ}} \times SUQ^i + C^{\text{ԾՈՊ}} \times \sigma Q^i + C^{\text{ԲՊ}} \times BQ^i + C^{\text{ԲԲՊ}} \times BBQ^i + C^{\text{ԲՏԿՊ}} \times BTQP^i$$

$$\sigma Q_{\text{հաշ.}}^i = 0.25 \times UQ^i + 0.15 \times SUQ^i + 0.1 \times \sigma Q^i + 0.15 \times BQ^i + 0.25 \times BBQ^i + 0.1 \times BTQP^i$$

3. Համայնքների ծախսային կարիքի կարգավորիչ գործակցները բյուջետային ապահովվածության գործակցների հաշվարկման համար “նորմավորվում” են հետևյալ բանաձևով՝

$$\sigma Q^i = \sigma Q_{\text{հաշ.}}^i / \sigma Q^{\text{միջին}}, \text{ որտեղ՝}$$

$\sigma Q^i$  - i-րդ համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակցի նորմավորված ցուցանիշն է,  
 $\sigma Q^{\text{միջին}}$  - բոլոր համայնքների ծախսային կարիքի կարգավորիչ գործակցների միջին կշռված ցուցանիշն է,

$$\sigma Q^{\text{միջին}} = \text{ԳՈՒՄ}(\sigma Q^i \times \mu_i) / \mu_{\text{ՀՀ}}, \text{ որտեղ՝}$$

- $\mu_{\text{ՀՀ}}$  - ՀՀ համայնքների բնակչության թվի հանրագումարն է (ՀՀ բնակչության թիվ):

#### **Հոդված 20. Դուտացիաների հաշվարկման և հատկացման կարգերը**

1.Համահարթեցման դուտացիաների հաշվարկման մեջ օգտագործվող՝ համայնքներին վերաբերող տվյալների աղբյուրներն են՝

1) ծախսային գործակիցների տվյալների համար՝ ՀՀ կառավարության առընթեր ուստիկանությունը, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական պահովության պետական ծառայությունը, ՀՀ մարզպետարանները և ՀՀ համայնքները,

2) Եկամտային ունակության տվյալների համար՝ համայնքներն ու ՀՀ կառավարության առընթեր պետական Եկամուտների կոմիտեն՝ յուրաքանչյուրն իր մասով:

2. Դուտացիաների հաշվարկման սույն օրենքով սահմանված գործակիցները և “ա” և “բ” գործոններով բաշխվող դուտացիաների գումարների բաժնեմասերի հարաբերությունները ֆինանսական համահարթեցման դուտացիայի ընդհանուր գումարի նկատմամբ կարող են փոփոխվել ոչ շուտ, քան երեք տարին մեկ անգամ:

3. Համայնքներին հատկացվող համահարթեցման դուտացիաների գումարները հաստատվում են պետական բյուջեի մասին օրենքով: Դուտացիաները համայնքներին հատկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից դուտացիաների հաշվարկներ կատարելու համար լիազորված պետական մարմինը:

4. Դուտացիաների հաշվարկներ կատարելու համար լիազորված պետական մարմինը բյուջետային օրենսդրությամբ սահմանված ժամկետներում իր պաշտոնական վեր - կայքում հրապարակում և տարածքային կառավարման մարմինների միջոցով տեղական ինքակառավարման մարմիններին տրամադրում է պետական մարմինների կողմից հաշվառվող՝ համահարթեցման դուտացիաների գումարների հաշվարկներում կիրառված ելակետային տվյալների ցուցանիշները:

5. Համահարթեցման դուտացիաների գումարների հաշվարկման համար անհրաժեշտ ելակետային տվյալները լիազորված մարմին ներկայացման, համահարթեցման դուտացիաների հաշվարկման և հատկացման բնագավառում պետության և համայնքների միջև առաջացող սույն օրենքով չկարգավորված հարաբերությունները կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության բյուջետային օրենսդրությամբ:

6. Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց համայնքներին հատկացված համահարթեցման դուտացիայի գումարի չափը կարող են վիճարկել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնում և դատարանում:

7. Համայնքների համահարթեցման դուտացիաները հատկացվում են հավասար չափաբաժններով յուրաքանչյուր անսկա վերջում, պետական ֆինանսների կառավարման լիազորված մարմնի տեղական գանձապետական ստորաբաժանումների՝ յուրաքանչյուր համայնքի համար բացված գանձապետական հաշվի միջոցով:

## Հոդված 21. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում՝

ա) 2010 թվականի բյուջետային տարվա և դրան հաջորդող բյուջետային տարիների համար ֆինանսական համահարթեցման դուտացիաների հաշվարկների կատարման մասով՝ 2009 թվականի հունվարի 1-ից՝

բ) ֆինանսական համահարթեցման դուտացիաների հատկացման մասով՝ 2010 թվականի հունվարի 1-ից:»

2. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ու ժը կորցրած ճանաչել 24 նոյեմբերի 1998 թ. –ի «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՕ-262 ՀՀ օրենքը:

# Հիմնավորում

## ֆինանսական համահարթեցման օրենքի նախագծի վերաբերյալ

Ֆինանսական համահարթեցման ՀՀ նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորվում է նրանով, որ ֆինանսական համահարթեցման համակարգը գործում է 1998 թվականից, երբ տեղական ինքնակառավարման մարմինները նոր էին կազմավորվել և նրանց բյուջեների եկամտային մասերն ու ֆինանսական կարողությունները շատ փոքր էին: Բացակայում էին ֆինանսական կարողությունների համահարթեցման առավել բազմագործոն մեխանիզմներ կիրառելու համար անհրաժեշտ հաշվարկային տվյալները: Ներկայումս իրավիճակը փոխվել է, ինչով և պայմանավորված է ֆինանսական համահարթեցման նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը:

### 1. Ֆինանսական համահարթեցման ներկա իրավիճակը

Ֆինանսական համահարթեցումը պետության բյուջետային քաղաքականության կարևորագույն գործառույթներից մեկն է, որի նպատակը տարբեր ֆինանսական կարողություններ ունեցող համայնքների միջև առկա թևեռացման մեղմացումն է, ինչպես նաև համայնքների ֆինանսական կարողությունների ամրապնդումն ու զարգացումը: Համահարթեցման սկզբունքով է կարգավորվում կառավարման տարբեր մակարդակների միջև ֆիսկալ քաղաքականության իրականացման մի մասը: Օրենքով սահմանված կարգով ֆինանսական թույլ կարողություններ ունեցող համայնքներին կառավարության կողմից տրամադրվում են որոշ ֆինանսական միջոցներ, որոնք համայնքը ծախսում է օրենքով իրեն վերապահված լիազորությունների իրականացման նպատակով:

Համահարթեցման դուստրացիաները տրվում են «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով, որոնք չունեն կոնկրետ ծախսման ուղղություններ, ուղղակի լրացնում են վարչական բյուջեի մուտքերը:

Պետական բյուջեից համայնքներին տրվող դուստրացիաների գումարի նվազագույն չափը սահմանված է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով (հոդված 58), ըստ որի տվյալ տարում տրամադրվող դուստրացիաների ընդհանուր գումարը (ներառյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն՝ պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) չպետք է պակաս լինի տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում ՀՀ համախմբված բյուջեի (պետական բյուջե, համայնքների բյուջեների հանրագումար, սոցիալական ապահովագրության բյուջե) փաստացի եկամուտների՝ 4%-ից, որն, ըստ համայնքների, հաստատվում է յուրաքանչյուր տարի «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով:

Դուստրացիաների բաշխումն, ըստ համայնքների, իրականացվում է օրենքով սահմանված հետևյալ կարգով՝ նախօրոք համայնքները տարանջատելով 2 խմբի՝

ա / 300 և պակաս բնակչություն ունեցողներ,

բ / 300-ից ավելի բնակչություն ունեցողներ:

300 և պակաս բնակչություն ունեցող համայնքների բյուջեներին նախատեսվող դոտացիայի ընդհանուր գումարը չպետք է պակաս լինի նախորդ բյուջետային տարում, եկամտահարկի, հողի հարկի, գույքահարկի(«ա» գործոն) փաստացի մուտքերի 25% -ի և եկամտահարկի փաստացի մուտքերի ընդհանուր գումարի 10%-ի («բ» գործոն) հանրագումարից, որն, ըստ համայնքների, բաշխվում է հավասարաչափ (օրինակ 2003-2006թթ-ին յուրաքանչյուր համայնքին 1500 հազար դրամ, 2007թ 2000 հազար դրամ ):

300-ից ավելի բնակչություն ունեցող առանձին համայնքների դոտացիաների գումարի չափը որոշվում է՝ հիմք ընդունելով վերջիններիս տնտեսական վիճակը բնութագրող հետևյալ գործոնները՝

1. Համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող հողի հարկը և գույքահարկի հաշվարկային մակարդակը՝ («ա» գործոն) հաշվարկման հիմք ընդունելով գույքահարկի և հողի հարկի հաշվառումը վարող ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացված տվյալ տարվան նախորդող 2-րդ բյուջետային տարվա հունվարի մեկի դրությամբ, տվյալների հիման վրա հաշվարկված համայնքների բյուջեների համապատասխան ցուցանիշները:

2. Համայնքի բնակչության թիվը («բ» գործոն), որի համար հիմք է ընդունվում ՀՀ պետական վիճակագրական մարմինների կողմից ներկայացված նախորդ բյուջետային տարվա հունվարի մեկի դրությամբ հանրապետության մշտական բնակչության թիվն՝ ըստ համայնքների:

«ա» գործոնով դոտացիա է նախատեսվում այն համայնքներին, որոնց մեկ շնչին ընկնող հողի հարկը և գույքահարկի գույք եկամտի միջին մակարդակը ցածր է հանրապետության բնակչության մեկ շնչին ընկնող հողի հարկի, գույքահարկի և «ա» գործոնով համայնքներին նախատեսվող դոտացիայի ընդհանուր գումարի միջին եկամտի սահմանային մակարդակից՝ հետևյալ բանաձևով.

$$Ա=(Ս-Դ) \times Բ \times Գ,$$

որտեղ Ա-ն «ա» գործոնով նախատեսված դոտացիայի գումարն է,

Ս-ն հանրապետության մեկ շնչին ընկնող միջին եկամտի (հողի հարկից, գույքահարկից, «ա» գործոնով դոտացիայի ընդհանուր գումարի միջինը) սահմանային մակարդակն է, որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Ս=[Դ+\square(Տ+Պ)] /(\square Բ),$$

որտեղ Դ-ն դոտացիայի ընդհանուր գումարն է

Տ-ն տվյալ համայնքի հողի հարկի հաշվարկային ցուցանիշն է

Պ-ն տվյալ համայնքի բյուջեի գույքահարկի հաշվարկային ցուցանիշն է

Բ-ն տվյալ համայնքի բնակչության թիվն է

Հ-տվյալ համայնքի մեկ շնչին ընկող միջին եկամտի (հողի հարկից և գույքահարկից) մակարդակն է, որը ցածր է հանրապետական մեկ շնչին ընկող միջին եկամտի («Ա»-ի) սահմանային մակարդակից, որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\mathcal{R} = (S + \mathcal{T}) / F,$$

որտեղ «Գ»-ն միջին կարգավորիչ գործակից է, որը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$G = T / \square [(U - R) \times F]$$

«Բ» գործոնով դոտացիա է տրվում բոլոր համայնքներին, դրա համար նախատեսված դոտացիայի ընդհանուր գումարը հարաբերելով հանրապետության (բացառությամբ 300-ից պակաս բնակչություն ունեցող համայնքների) բնակչության ընդհանուր թվին, բազմապատկելով տվյալ համայնքի բնակչության թվով։

Այսպիսով,  $R = G$  գործող օրենսդրությամբ համայնքների բյուջեներին հատկացվող պաշտոնական տրանսֆերտների (դոտացիաների) տրման սկզբունքը եկամուտների համահարթեցումն է, որը իրագործվում է 3 ձևերով։

1. Հաստատագրված ֆինանսական համալրում՝ մինչև 300 բնակիչ ունեցող համայնքներին հավասարաչափ։
2. Ֆինանսական ուղղակի համալրում՝ ըստ բնակչության թվաքանակի (300-ից ավելի բնակչություն ունեցող համայնքների համար՝ օրենքի «բ» գործոնով):
3. Հարկային եկամուտների համահարթեցում (300-ից ավելի բնակչություն ունեցող համայնքների համար) օրենքի «ա» գործոնով։

Առավելություններ՝

Սույն բանաձևով դոտացիայի բաշխումը պաւրգ մեխանիզմ է, որն ապահովում է դոտացիայի բաշխման որոշակիությունը և թափանցիկությունը։

Թերություններ՝

Սույն կարգով (բանաձևով) դոտացիաների բաշխումն ունի հետևյալ հիմնական թերությունները, որոնք հակասում են համահարթեցման սկզբունքին:

1. Շատ ընդհանրացված ձևով հաշվի առնելով համայնքների ֆինանսական կարողությունը՝ հաշվի չեն առնվում նրանց ֆինանսական կարիքները և դրանց տարբերությունները։
2. Բանաձևի մեջ ներառված չեն համայնքների իրական պահաջներն արտացոլող բաղադրամասերը և ծախսային յուրահատկությունները։

3. Զկա կապ համահարթեցմամբ տրվող դոտացիաների և ՏԻՄ-երի կողմից ծառայությունների մատուցման մակարդակի միջև:
4. 300- և պակաս բնակչություն ունեցող համայնքները, որոնցից 36-ն ունեն մինչև 100 բնակիչ, 60-ը՝ մինչև 200 բնակիչ, 97-ը՝ մինչև 300 բնակիչ, դոտացիա են ստանում հավասարաչափ 2000 հ.դ. , մինչդեռ 300-ից քիչ ավելի բնակիչ ունեցող և գրեթե նույն ֆինանսական կարողություններն ունեցող 78 համայնք ստանում են դրանից պակաս:
5. Դաշվառված և գնահատված չէ համայնքների կարողությունների մեկնարկային ճեղքածքը՝ ծառայությունների մատուցման համատեքստում:
6. Անկախ կարիքավորութան աստիճանից՝ դոտացիա են ստանում բոլոր համայնքները (օրինակ Երևան քաղաքը ստանում է 4.95 մլրդ դրամ կամ ընդհանուր դոտացիայի մոտավորապես 31%-ը ):
7. Զկան ֆինանսական համահարթեցման գնահատման և վերահսկման մեխանիզմներ:
8. Բաշխման ներկա մեթոդը չի խթանում ՏԻՄ-ին՝ բարձրացնելու սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:

## 2. Ֆինանսական համահարթեցման նոր համակարգը

Ելնելով Հայաստանի տեղական ինքնակառավարման առանձնահատկություններից և հաշվի առնելով ֆինանսական համահարթեցման նախորդ տարիների փորձը՝ առաջարկվող ֆինանսական համահարթեցման նոր համակարգը կառուցվելու է մի քանի հիմնարար սկզբունքների հիման վրա՝

- հաշվի առնելով ՀՀ համայնքների բյուջեներում սեփական եկամուտների ցածր մակարդակը՝ ֆինանսական համահարթեցման համար համայնքներին տրամադրվող դոտացիաները պետք է հատկացվեն պետական բյուջեի միջոցներից՝ բացառելով ավելի հարուստ համայնքների եկամտային մասից այդ նպատակի համար միջոցների գանձումը (բացասական դոտացիա),
- համահարթեցման սկզբունքով համայնքներին հատկացվող դոտացիաների հաշվարկման համար հիմք ընդունել համայնքի հաշվարկային եկամտային ունակությունների և համայնքների պարտադիր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ծախսային կարիքները,
  - ✓ Եկամտային ունակության հաշվարկման համար հիմք է հանդիսանում համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող հողի հարկի և գույքահարկի հաշվարկային մակարդակը, համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող մասհանվող եկամուտների (եկամտահարկ, շահութահարկ) և պետական տուրքի փաստացի մակարդակը:
  - ✓ Ծախսային կարիքի հաշվարկման համար հիմք են ընդունում այն գործոնները (ծախսային չափորոշիչներ), որոնք էականորեն ազդում են համայնքի կողմից իրականացվող ծառայությունների (պարտադիր լիազորություններ) իրականացման համար անհրաժեշտ ծախսերի վրա,

իսկ դրանց վերաբերյալ տեղեկատվությունը չափելի է, մատչելի և հավաստի:

Ծախսային կարիքների կարգավորիչ գործակիցը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով ծախսային գործակիցների ցուցանիշները և ընդհանուրի մեջ տվյալ գործակցի տեսակարար կշիռը:

- քանի որ ՀՀ –ում կան փոքրաթիվ բնակչությամբ շատ համայնքներ, որոնք նույնիսկ մեկ շնչին ընկնող բյուջետային ապահովության բարձր մակարդակի պայմաններում չունեն բավարար ֆինանսական միջոցներ՝ պարտադիր լիազորությունների կատարման համար, անհրաժեշտ է այդ համայնքներին համահարթեցման դուտացիաների կազմում նախատեսել ֆինանսական ուղղակի համալրման գումարներ.
- համահարթեցման սկզբունքով համայնքներին հատկացվող միջոցները համարվում են համայնքի բյուջեի եկամուտ, տնօրինվում են համայնքի կողմից ինքնուրույն և չեն կարող ենթադրել որևէ կոնկրետ ծախսի իրականացում.
- համահարթեցման սկզբունքով տրամադրվող միջոցների հաշվարկը պետք է իրականացվի օրենքով սահմանված բանաձևի միջոցով, իսկ դրանց արդյունքները պետք է կազմեն պետական բյուջեի բաղկացուցիչ մաս և հրապարակվեն:
- յուրաքանչյուր տարվա համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դուտացիաների հաշվարկն իրականացնելու համար հիմք են ընդունվում հաշվարկվող տարուն նախորդող երկրորդ տարվա համապատասխան ցուցանիշները.
- համայնքներին հասանելիք համահարթեցման միջոցները համայնքների բյուջեներին պետք է հատկացվեն ամիսը մեկ անգամ՝ հավասար չափաբաժիններով: